**Սյունիքի Մարզ**
**Տարածքը՝ 4506կմ2**
**Բնակչությունը՝ 141.8հազ մարդ**
**Կենտրոնը՝ Կապան**



# *Մարզը արլ հատվածով սահմանակցում է ԼՂՀ-ին, արմ-ից Նախիջևանին, հվ-ից ԻԻՀ-ին, իսկ հս-ում մարզի սահմանները հատվում են Վայոց Ձորի սահմանների հետ*



Սյունիքը մեր երկրի ամենալեռնոտ և մակերևույթի բարձրությունների ամենամեծ տարբերություններ ունեցող մարզն է, նրա ամենաբարձր և ամենացածր կետերի տարբերությունը անցնում է 3500մ-ից






*Մարզի կլիմայական պայմանների վրա մեծ ազդեցություն ունի Իրանական բարձրավանդակի չոր ու արի. Օդային հոսանքներըգետերից նշանավոր են Որոտանը, Ողջին, Մեղրիգետը: Որոտանը ՀՀ-համար ունի տնտեսական մեծ նշանակություն: Նրա վրա կառուցված են մի քանի ջրամբարներ… Մարզի հողաբուսական ծածկը ենթարկվելով վերընթաց գոտիականության, առանձնանում է իր բազմազանությամբ,,,Սյունիքն աչքի է ընկնում նաև անտառային լանդշաֆտի յուրահատկությամբ*

Ծավ գետի ավազանում ստեղծվել է Շիկահողի արգելոցը, որտեղ հայտնի է աշխարհի ամենախոշոր բնական սոսիների ռելիկտային պուրակը



# Օգտակար հանածոներով ՀՀ ամենահարուստ մարզն է: Հայտնի է Կապանի պղնձի, Քաջարանի և Ագարակի պղնձամոլիբդենային, Սվարանցի երկաթաքարի, այլ մետաղների հարուստ հանքավայրերը

Մարզում բազմազան են բնական և ճարտարապետական հուշարձանները:

Մարզը բնակեցված է եղել դեռևս հին ժամանակներից: Ներկայումս թիվը կազմում է 141.8 հազ մարդ, խտությունը շատ ցածր է, սակայն ուրբանիզացման մակարդակով հրավում է առաջին տեղը՝67%: Քաղաքային բնակավայրերը 7 են՝ Կապան՝ Մարկենտրոն, Ագարակ, Քաջարան, Սիսիան, Դաստակերտ, Մեղրի, Գորիս:



Սյունիքը համարվում է արդյունաբերական մարզ, որի տված արտադրանքով՝ 18% ՀՀ-ում երկրորդն է Երևանից հետո: Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի բազայի վրա գործող Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը ՀՀ-ի խոշորագույն ձեռնարկություններից է



Սննդի արդյունաբերությունը հիմնականում ունի տեղական նշանակություն: Ապրանքային նշանակություն ունեն միայն մրգի պահածոները, գինիները՝Մեղրի և պանիրը՝ Սիսիան





Մեքենաշինության և թեթև արդյունաբերության ՝ Կապան, Գորիս, Սիսիան- ներկայումս չի աշխատում, կամ աշխատում է մասամբ:
Այստեղ է գտնվում ջրային էլեկտրակայանների՝ ՀՀ-ում երկրորդ Որոտանի կասկադը



Գյուղատնտեսության մասնագիտացման առումով նկատելի տարբերություն կա մարզի հյուսիսի և հարավի միջև: Հյուսիսում տիրապետում են լեռնային տափաստաններն ու մարգագետինները և դրանց համապատասխան էլ հացահատիկային տնտեսությունն ու անասնապահությունը: Հարավի համար ավելի բնորոշ է պտղաբուծությունն ու ոչխարաբուծությունը

# Շնորհակալություն

